

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«ՄԱՎ ՄԱՅՆԻՆՔ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Խ. Աբրահամյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | Էջ |
|--|----|
| ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ | 3 |
| 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 6 |
| Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը | 6 |
| Նախատեսվող գործունեության բնութագիրը | 8 |
| Նախագծման նորմատիվ-իրավական հենքը | 12 |
| 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ | 17 |
| Գտնվելու վայրը | 17 |
| Ռեյիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր | 9 |
| Շրջանի կլիման | 23 |
| Մթնոլորտային օդ | 25 |
| Ջրային ռեսուրսներ | 26 |
| Հողեր | 29 |
| Բուսական և կենդանական աշխարհ | 32 |
| Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ | 35 |
| 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ | 38 |
| Ենթակառուցվածքներ | 38 |
| Հողերի տնտեսական յուրացման բնութագիր | 42 |
| Պատմության, մշակութային հուշարձաններ | 48 |
| 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻԶՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 49 |
| 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 54 |
| 6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ | 58 |
| 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ | 61 |
| Օգտագործված գրականության ցանկ | 64 |
| Հավելված 1. | 65 |

Ընդերք՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար.

Ընդերքօգտագործում՝ երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում.

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ.

Ընդերքի տեղամաս՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ.

Օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Արարատի մարզի Բերքանուշի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը գտնվում է Արարատյան իջվածքի հարավ-արևելյան մասում, Արաքս գետի ձախափնյա մասում:

Տեղամասի հարակից տարածքը ըստ Վ.Ամարյանի և Է.Խարազյանի ամբողջությամբ ծածկված է պլիոցեն-չորրորդականի և ժամանակակից լճային, լճագետային նստվածքներով ու հրաբխածին ապարներով և, մասամբ այլուվիալ-պրոլյուվիալ և ճահճային առաջացումներով:

Շրջանի երկրաբանական կտրվածքի հիմքի ծալքավոր կոմպլեքսի ապարներից միայն միոցենի ապարներն են մերկանում ոչ մեծ տարածքում, շրջանի հյուսիս-արևելյան մասում: Ներկայացված են դրանք Հացավանի (կարմրավուն ավազաքարեր, կավեր, կոնգլոմերատներ), Ջրվեժի (աղաբեր և գիպսատար ապարներ) և Հրագդանի (կրային կավեր, ավազաքարեր, գլաքարեր) շերտախմբերով:

Միոցենի նստվածքների տակ տարբեր խորությունների վրա խորքային հորատանցերով կտրվել են օլիգոցենի, միջին-վերին էոցենի, կավճի ապարները, իսկ Արարատյան իջվածքի հարևան տարածքներում նաև պրոտերոզոյստորին պալեոզոյան հասակի մետամորֆային հիմքի ապարները:

Արարատյան իջվածքի ոչ դիսլոցացված ծածկոցը կազմում են վերին պլիոցենի դոլերիտային բազալտները և չորրորդականի անդեզիտաբազալտային ծածկույթները, բաղկացած առանձին հոսքերից, որոնք միմյանցից անջատվում են կավերի, ավազակավերի, կոպիճների և մանրագլաքարերի հերթափոխվող շերտերով:

Նկարագրվող կտրվածքը եզրափակվում է վերին չորրորդականի Արարատյան դաշտավայրի ստորին գետալճային դարավանդի նստվածքներով ու ժամանակակից այլուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ նստվածքներով:

Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր նստվածքներ: Արարատյան իջվածքը ներկայացված է միոցեն-պլիոցենի և հոլոցենի մինչև 500 մ հզորությամբ լճագետային նստվածքներով

և, մասամբ, հրաբխածին ապարներով: Արաքս և Հրազդան գետերի այլուվիալ նստվածքների հզորությունը հասնում է մինչև 70 մ, ինչը վկայում է դրանց ինտենսիվ ակումուլյատիվ-էրոզիոն գործունեության մասին:

Երևական շրջանում Արաքս և Հրազդան գետերի և դրանց վտակների դիրքը հաճախ չի համընկնում ժամանակակից հունին և տեղաշարժված են դրանց նկատմամբ 2-ից մինչև 10 կմ չափով: Տեղաշարժման այդպիսի ամպլիտուդան վկայում է գետերի ինտենսիվ մեանդրագենեզի և փուխր բեկորային առաջացումների լայն զարգացման մասին:

Տեկտոնական տեսակետից շրջանը հարում է Մերձարաքսյան միոգենոսինկլինալային և Միջինարաքսյան միջլեոնային իջվածքի միակցման գոտուն՝ Արարատի բարձրացումին: Վերջինս հերցինյան հիմքի ելուստ է, ունի հյուսիս-արևելյան տարածում և սահմանափակվում է Երևանի և Արարատի խորքային բեկվածքներով:

Հետախուզվող տեղամասի ազակոպճային խառնուրդի կուտակը գենետիկորեն կապված է Արաքս գետի արտաբերման և ավիամերձ ժամանակակից ու վերին չորրորդականի այլուվիալ-դելյուվիալ նստվածքների հետ :

Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ժամանակակից այլուվիալ առաջացումները՝ ԱԿԽ-ի կուտակի տեսքով, որի հիմքում տեղադրված են վերին չորրորդականի նստվածքային առաջացումները^a ներկայացված ավազակավերով :

Տեղամասը գենետիկորեն կապված է Արաքս գետի ժամանակակից ողողահունային նստվածքների հետ և վերագրվում է գետաողողատային տիպին: Օբյեկտի օգտակար հանածոյի կուտակը կախված Արաքսի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխությունից, մասամբ փոխում է իր դիրքը՝ տեղաշարժվելով դրա լվացման կամ նոր բերվածքների կուտակման շնորհիվ, սակայն տարեկան կամ բազմամյա ցիկլում գործնականում պահպանում է նախնական դիրքը:

Օգտակար հանածոն վերագրվում է այդ բերվածքներին և ներկայացված է հրաբխածին նստվածքային և մագմատիկ ապարների ու միներալների բեկորներով, որտեղ գերակշռում են անդեզիտաբազալտային կազմի ապարները, տուֆիտները և հազվադեպ կրաքարերը :

Տեղամասի ավագակոպճային խառնուրդի կուտակն ունի հյուսիս-արևմտյանից հարավ-արևելյան տարածում (մոտ շուրջ 1կմ երկարությամբ): Այն ամբողջովին մերկացած է և զուրկ է հողաբբուսական շերտից :

Ըստ ֆոնդային նյութերի ու դաշտային դիտարկումների ավազներն ըստ հատիկների չափի միջին խոշորության ավազներ են: Մանրակոպիճի պարունակությունը դրանցում հասնում է մինչև 15%, կավային մասնիկներինը՝ մոտ 2-5%: Վերջիններս ապարում գտնվում են նուրբ ենթաշերտերի ձևով ու փոշիացած ցրված վիճակում: Մանրակոպիճը հիմնականում ներկայացված է գրանիտոիդային և անդեզիտաբազալտյին կազմի բավական լավ հղկված կլորավուն ձևի կտորներից:

Ավագակուտակը հիմնատակվում է կավերի ու կավաավազների շերտով:

Մակաբացման ապարները ներկայացված են բարակ հողաբբուսական տղմակավային շերտով և 0.35-0.5 մ հզորության կավավազային նստվածքներով:

Հետախուզվող տեղամասի օգտակար հանածոյի մարմինը իրենից ներկայացնում է հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև ավագակուտակ, որը որպես տարեկան և բազմամյա ցիկլում տարածական դիրքը, ձևը և չափերը փոփոխող գետահունային ավագակուտակ, վերագրվում է 1-2 :

▪ ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել նույն մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 4.8 հա տարածքի վրա բոլոր փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Հետախուզահորերի անցումը նախատեսվում է օգտակար հանածոյի մարմնի լրիվ հզորության բացման և նմուշարկման համար: Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով և մասամբ ձեռքով՝ V կարգի ամրության ապարներում:

Հետախուզահորերի անցումը հնարավորություն կտա հստակեցնելու տեղամասում այլուվիալ-դելյուվիալ առաջացումների հզորությունը և դաշտային պայմաններում որոշելու ավազների բնական խտությունը (բնամասում), ծավալալիրքային զանգվածը և փխրեցման գործակցը: Ըստ ֆոնդային նյութերի տվյալների այլուվիալ-դելյուվիալ կավավազային առաջացումների ու հողաբբուսական

շերտի հզորությունը տեղամասում տատանվում է 0.15-0.35մ սահմաններում, միջինը կազմում է 1.20մ (բուն հողաբուսական շերտը՝ 0.12մ): Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V- VI կարգի ամրության ապարներում:

Ընդամենը նախատեսվում է 2.0 x 3.0 կտրվածքով ու մինչև մոտ 5 մ խորության 15 հետախուզահորերի անցում՝ 75 մ ընդհանուր խորությամբ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են անցած բոլոր հետախուզահորերը, ընդհանուր 75մ երկարությամբ: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով, առաջատար մասնագետի կողմից:

Փաստագրման աշխատանքների ծավալը կկազմի 75զժ.մ:

Տեղամասում անցած հետախուզահորերի փաստագրումից, նմուշարկումից և դաշտային պայմաններում ծավալային զանգվածի որոշումից հետո նախատեսվում է հետախուզահորերի լցման աշխատանքներ: Դրանք կկատարվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով և մասամբ ձեռքով:

Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 450 մ³ (75 x 2.0 x 3.0):

Դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավա-լալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար հետախուզահորերի անցմանը զուգընթաց նախատեսվում է դաշտային պայմաններում որոշել կուտակի ծավալային և ծավալալիքային զանգվածների, ինչպես նաև փխրեցման գործակիցը:

Ավազի ծավալային զանգվածը բնամասում նախատեսվում է որոշել 3 հետախուզահորերի անցման ժամանակ՝ դաշտային պայմաններում, որի ընթացքում կորոշվի նաև դրա փխրեցման գործակիցը: Հետախուզահորերի նշված միջակայքերը նախատեսվում է անցնել ձեռքով՝ արդյունահանված ապարի ծավալի հավաստիությունը ապահովելու նպատակով:

Դաշտային պայմաններում ավազի ծավալային զանգվածը բնամասում որոշելու համար նախատեսվող կուտակի զանգվածը կկազմի 60մ³:

Օգտակար հանածոյի նմուշարկումը նախատեսվում է դրա հատիկալին կազմի և որակական հատկանիշների պարզաբանելու համար:

Ֆիզիկամեխանիկական ուսումնասիրությունների նպատակով հետախուզահորերից նախատեսվում է վերցնել 15 նմուշ ակոսային եղանակով (մեկական յուրաքանչյուր փորվածքից): Նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզահորի պատից, օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ (ավազակուտակի հզորությունը ակնկալվում է մինչև 4-5 մ)՝ ակոսի 5x10 սմ կտրվածքով:

Դրանցից 3 նմուշ կենթարկվի նաև քիմիական անալիզի և 3 նմուշ միներալային կազմի ուսումնասիրությունների:

Լաբորատոր հետազոտությունները կիրականացվեն «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում, պայմանագրային հիմունքներով միներալոգիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ Երկրաբանական ինստիտուտում:

Ծրագրով նախատեսվում է կատարել ԱԿԽ-ի ֆիզիկամեխանիկական փորձարկումներ, քիմիական և միներոլապետրոգրաֆիական ուսումնասիրություններ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների: Ընդհանուր առմամբ ֆիզիկամեխանիկական հետազոտությունների համար նախատեսվում է վերցնել 15 նմուշ:

Նախքան լաբորատորիա ուղարկելը ակոսային նմուշները տեղում կենթարկվեն մշակման: Նմուշների մշակումը կկատարվի հետևյալ կերպ՝ նմուշարկված ամբողջ ավազի կուտակը կլցվի բրեզենտե փովածքի վրա, կխառվի և միանգամյա կրճատման միջոցով կհասցվի 15 կգ, որը և կկազմի շարքային նմուշի նյութը:

Վերջինս կլցվի առանձին պարկերի մեջ, կպիտակավորվի և նոր միայն կուղարկվի լաբորատորի լրիվ ծրագրով ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Օգտակար հանածոյի լաբորատոր հետազոտությունները կկատարվեն մասնագիտացված և լիցենզավորված լաբորատորիայում:

Ապարի քիմիական և միներոլապետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ հետախուզումն իրականացնող կազմակերպության կողմից:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել տեղամասի ապարների կազմը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, ինչպես նաև պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրոցեսները:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան դրանք ուսումնասիրել և նկարագրել, կատարել ռեժիմային դիտարկումներ և ուսումնասիրել ջրի որակը: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կպահանջվի խմելու և տեխնիկական ջուր: Տեխնիկական ջուրը կապահովվի Արաքս գետից, իսկ խմելու ջուրը կբերվի մոտակա գյուղերից ավտոտրանսպորտով:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար տեղամասի տարածքում նախատեսվում է կատարել սքրինինգային ճառագայթային մոնիթորինգային աշխատանքներ, որոնց հիման վրա կտրվի դրա ճառագայթահիգիենիկ գնահատականը:

Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպության կողմից:

Դաշտային աշխատանքների և լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո, դրական արդյունքների դեպքում, նախատեսվում են աշխատանոցային աշխատանքներ համապատասխան գծագրական հավելվածներով երկրաբանական հաշվետվության (պաշարների հաշվարկով) և հանքավայրի շահագործման նպատակահարմարության ՏՏՀ-ի կազմման համար, որոնց ընթացքում՝

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվություն:

Պաշարների հաշվարկման նյութերը կներկայացվեն պետական ընդերքաբանական փորձաքննության: Նշված աշխատանքները կատարելու համար պետք է՝

Խմբի ղեկավար - 1 մարդ - 2 ամիս

Առաջատար երկրաբան - 1 մարդ - 1.5 ամիս

I-ին կարգի երկրաբան - 1 մարդ - 1 ամիս

Գծագրող - 1 մարդ - 0.5 ամիս:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի

պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
 - «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որով կարգավորվում են մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի,

բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի N22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի N1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների

պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով

սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները,

- ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N18-Ն որոշումը, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, Արաքս գետի ողողատներում գտնվող հանքավայրերից գետավազի արդյունահանման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը,
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:
- ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրաման, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


▪ *Գտնվելու վայրը*

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքից 1.1կմ դեպի հարավ-հարավ-արևմուտք, Այգեթափ գյուղից շուրջ 9կմ դեպի հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախափնյա ողողատում (նկար 1-2): Տեղամասը գտնվում է մակերես 818-819.5մ բացարձակ բարձրությունների վրա: Տարածքը ներառված է Արտաշատ խոշորացված համայնքի Դալար բնակավայրում: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են ըստ Գրինվիչի. հյուսիսային լայնություն $39^{\circ} 56' 52''$, արևելյան երկայնություն $44^{\circ} 37' 58''$: Մոտակա բնակավայրերն են Վերին Արտաշատ, Քաղցրաշեն, Քաղցրիկ, Այգեթափ գյուղերը, Արտաշատ քաղաքը: Հետախուզվող տեղամասը Երևանի հետ կապված է (30 կմ) ավտոմայրուղով:



Նկար 1.

Հայցվող տարածքը գտնվում է Բերքանուշ գյուղի բնակելի շինություններից 2560մ, Դալար գյուղի բնակելի շինություններից՝ 3150մ, Մրգավան գյուղի բնակելի շինություններից և Հ-8 ավտոճանապարհից՝ 3135մ, Արտաշատ քաղաքի բնակելի շինություններից՝ 2600մ: Մ-2 միջպետական ավտոճանապարհը անցնում է հայցվող տարածքից 2165մ:



Նկար 2.

Տարածքի խոշոր բնակավայրը ՀՀ Արարատի մարզի մարզկենտրոն Արտաշատ քաղաքն, որի բնակչությունը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 19.1 հազ. մարդ:

Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և խմիչի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքի), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը):

Հայցվող տարածքների հատակագիծը ArmWGS-84 համակարգի ծայրակետային կոորդինատներով և կոորդինատները ներկայացվում են հավելված 1-ում:

▪ ***Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սողանքներ, սեյսմիկ բնութագիր***

Երկրաձևաբանական տեսակետից հանքավայրի տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:

Հանքավայրի տարածքի բարձրությունը տատանվում է 814-816մ-ի սահմաններում: Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով: Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ:

Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգավորություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել են Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները:

Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է ժամանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովիտարածև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3 և 4-ում:

Հանքավայրի շրջանում արտածին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով:

Մոտակա հայտնի սողանքային մարմինը քարտեզագրվել է Բերքանուշի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասից մոտ 11.12կմ հեռավորության վրա՝ Այգեգարդ բնակավայրից մոտ 2կմ հյուսիս-արևելք, Քաղցրաշեն բնակավայրից մոտ 0.5կմ հարավ-արևելք (նկար 5):


Սողանքային մարմնի կենտրոնի կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ 39° 58' 17" և արևելյան երկայնությունը՝ 44° 38' 14":

Մարմինը գտնվում է 982մ բացարձակ բարձրության վրա, զբաղեցնում է մոտ 184հա տարածք (երկարությունը՝ 1300մ, լայնությունը՝ 1800մ):


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի հավելված 1-ի և հավելված 2-ի՝ տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 6):

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման հավելված 3-ի՝ ուժեղ երկրաշարժի դեպքում հանքավայրին ամենամոտ գտնվող բնակավայրերում երկրաշարժի ուժգնությունը ըստ MSK-64 սանդղակի կկազմի 8 բալ:

Շրջանի երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

 Ներլեռնային ցածր /700-1000մ/ ենթահորիզոնական մասամբ դարավանդավորված հարթավայրեր

Նկար 3.


Շրջանի լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

 0-9° մեղմաթեք հարթավայրեր

Նկար 4.



Նկար 5.



Նկար 6.

• **Շրջանի կլիման**

Բերքանուշի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանը, իր ցածր հիպսոմետրական դիրքի շնորհիվ, բնութագրվում է արևային ճառագայթման զգալի ինտենսիվությամբ (նկար 7):

Կլիման չոր կտրուկ ցամաքային է, ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 12°C, միջին ամսական ջերմաստիճանը հունվարին՝ -4.0°C, հուլիսին՝ 24.0°C: Միջին տարեկան բացարձակ մաքսիմումը կազմում է 41°C: Օդի 5.0°C օրական միջին ջերմաստիճանով ժամանակահատվածի տևողությունը կազմում է 270 օր, 10.0°C՝ 220 օր:

Տեղումների տարեկան միջին քանակը մոտ 300մմ է, 0.1մմ և ավելի տեղումներով օրերի թիվը կազմում է 70, իսկ 5մմ և ավելի տեղումներով օրերի թիվը՝ 10: Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը՝ 61%, հունվարին՝ 80%, հուլիսին՝ 45%: Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2800 ժամի: Ռադիացիոն տարեկան հաշվեկշիռը կազմում է 62.0 կկալ/սմ²:


Շրջանին բնորոշ լեռնահարթավայրային քամիները առավել ուժեղ արտահայտվում են ամռան ամիսներին: Նրանց արագությունը երբեմն հասնում է մինչև 15 մ/վ: Ամռանը՝ Իրանից և Մերձկասպյան տարածքներից, մերթընդմերթ փչում են տաք, չոր քամիներ: Ձմռանը գերակշռում են թույլ քամիները:

Ստորև, աղյուսակ 1-6-ում ներկայացվում են տարածքի օդերևութաբանական տվյալները ըստ մոտակա Արտաշատ կայանի տվյալների (829մ բացարձակ բարձրություն):

Աղյուսակ 1.

| Օդի ջերմաստիճանը ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | |
|-----------------------------------|------|-----|------|------|------|------|------|------|------|-----|------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| -3.6 | -0.9 | 5.6 | 12.7 | 17.5 | 21.5 | 25.3 | 24.8 | 19.8 | 13.0 | 6.0 | -0.6 |

Բազմամյա դիտարկումների տվյալներով գրանցված միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.8°C, բացարձակ նվազագույնը՝ -29°C, բացարձակ առավելագույնը՝ 43°C: Տարեկան միջին խոնավության ցուցանիշը կազմել է 64մմ, տարվա ամենացուրտ ամսվա միջին ամսական ժամը 15-ին՝ 64մմ, ամենաշոգ ամսվա միջին ամսական ժամը 15-ին՝ 32մմ:



Նկար 7.

Աղյուսակ 2.

| Օդի խոնավությունը ըստ ամսիսների, մմ | | | | | | | | | | | |
|-------------------------------------|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| 78 | 73 | 63 | 58 | 59 | 54 | 51 | 52 | 57 | 68 | 73 | 79 |

Աղյուսակ 3.

| Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | |
|--|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|-------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | միջին |
| 18 | 18 | 27 | 36 | 40 | 25 | 11 | 6 | 10 | 22 | 24 | 17 | 254 |
| 18 | 20 | 32 | 36 | 43 | 34 | 27 | 22 | 28 | 36 | 31 | 25 | 43 |

Աղյուսակ 4.

| Չնաճածկույթը | | |
|--|--------------------------------------|--------------------------------------|
| առավելագույն տասնորյակային բարձրությունը, սմ | տարվա մեջ ձնաճածկույթով օրերի քանակը | ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ |
| 40 | 36 | 46 |

Աղյուսակ 5.

| Ամիսները | Անհողմությունների կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում | | |
|-----------|--------------------------------------|---------------------------------|---------------------------------|---|--|----|-----|
| | | | | | 20 | 50 | 100 |
| Հունվար | 0 | 2.0 | 2.5 | 32 | 31 | 35 | 38 |
| Ապրիլ | 0 | 2.7 | | | | | |
| Հուլիս | 0 | 3.2 | | | | | |
| Հոկտեմբեր | 0 | 2.2 | | | | | |

Աղյուսակ 6.

Քամիների կրկնելիությունը և միջին արագությունները

| Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա | Ամիսներ | Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ | | | | | | | |
|--|-----------|---|--------|-----|--------|-----|--------|-----|--------|
| | | Ուղղությունները | | | | | | | |
| | | Հս | Հս-Արլ | Արլ | Հվ-Արլ | Հվ | Հվ-Արմ | Արմ | Հս-Արմ |
| 920.2 | հունվար | 7 | 8 | 10 | 20 | 12 | 10 | 15 | 18 |
| | | 1.7 | 1.7 | 2.7 | 3.1 | 2.4 | 2.0 | 2.2 | 1.7 |
| | ապրիլ | 4 | 9 | 12 | 27 | 13 | 8 | 13 | 14 |
| | | 1.7 | 1.8 | 2.1 | 2.8 | 2.5 | 2.5 | 2.8 | 2.6 |
| | հուլիս | 8 | 7 | 9 | 16 | 9 | 9 | 18 | 24 |
| | | 1.7 | 1.9 | 1.7 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.7 | 2.3 |
| | հոկտեմբեր | 7 | 12 | 12 | 19 | 8 | 10 | 16 | 16 |
| | | 1.6 | 1.5 | 2.1 | 2.0 | 1.5 | 2.1 | 2.4 | 2.0 |

▪ **Մթնոլորտային օդ**

Ըստ մթնոլորտային օդի վիճակի՝ Արտաշատի տարածաշրջանը գնահատվում է որպես սահմանափակ-բարենպաստ: Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը

(ՄՕՊ), որը բնորոշում է դիտարկվող տարածքի մթնոլորտային օդի ինքնամաքրման ունակությունը, կազմել է 1.43: Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Արտաշատ քաղաքում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում:

Հայցվող տեղամասի ազդակիր բնակավայրի՝ Դալար գյուղի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (ներկայումս՝ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ) կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Հանքավայրի տարածքում 2023 թվականի հունվար ամսին կատարված դիտարկումներով մթնոլորտային օդում արձանագրվել է. փոշի՝ 0.03մգ/մ³, ծծմբի երկօքսիդին՝ 0.01մգ/մ³, ազոտի երկօքսիդին՝ 0.015մգ/մ³:

▪ ***Ջրային ռեսուրսներ***

Ավազակոպձային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող հանքավայրի տարածքը ծագումնաբանորեն կապված են Արաքս գետի հիդրոլոգիական ռեժիմի հետ: Արաքս գետի վրա եղած 4 հիդրոլոգիական դիտարկման կետերի 5-7 տարիների դիտարկման տվյալները ցույց են տվել, որ Արաքս գետը հանքավայրի շրջանում բնութագրվում է տարվա մեջ մեկ՝ գարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 1690մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 16.6 մ³/վրկ: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է 167 մ³/վրկ: Ջրի միջին տարեկան ծախսը կազմում է 86.2մ³/վրկ:

Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ:

Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²:

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ մոտակա դիտակայաններում (Հրազդան գետից թափման կետից վերև և ներքև, նկար 8) մշտադիտարկումները կատարվել են 2022 թվականի 3-րդ եռամսյակում:



Նկար 8.

| Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար) | Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ) | | | | | | | | | | |
|--|--|----------------------------|--------------------------|--------------------|----------------------|---------------------|---------------------|----------------------|--------------------------|--------------------|------------------------|
| | Սննդի իոն, ՍԹԿ=0.39 մգN/լ | Նիտրիտ իոն, ՍԹԿ=0.024մգN/լ | Սուլֆատ իոն, ՍԹԿ=100մգ/լ | Մեղկ ՍԹԿ=0.001մգ/լ | Պղինձ, ՍԹԿ=0.001մգ/լ | Քրոմ, ՍԹԿ=0.001մգ/լ | Նիկել, ՍԹԿ=0.01մգ/լ | Մանգան, ՍԹԿ=0.01մգ/լ | Վանադիում, ՍԹԿ=0.001մգ/լ | Երկաթ, ՍԹԿ=0.5մգ/լ | Ալյումին, ՍԹԿ=0.04մգ/լ |
| Հրազդան գետի թափման կետից վերև (26) | 4,1 | 3,6 | 1,7 | 2,9 | 4,0 | 4,7 | - | 5,5 | 14,7 | - | 5,1 |
| Հրազդան գետի թափման կետից ներքև (27) | 3,2 | 6,6 | 1,6 | 2,7 | 2,9 | 5,4 | - | 6,7 | 14,9 | - | 4,8 |

Գետը բնութագրվում է գարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 925 մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 24 մ³/վրկ: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է 167մ³/վրկ: Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100կգ/վրկ: Այդ բերվածքները լինում են հատիկային և կախույթային: Հատիկային նստվածքները բաղկացած են ապարների տարբեր ֆրակցիաների հատիկներից, որոնք էլ կախված գերակշռող ֆրակցիայից առաջացնում են ավազակոպձային խառնուրդի կամ ավազի կուտակներ: Կախույթային բերվածքները առաջացնում են կավային և տիղմային նստվածքներ, որոնք բաղկացած են 0.1-1մմ և ավելի փոքր չափսերի հատիկներից: Արաքսի ավազանի նմանատիպ օբյեկտների շահագործման փորձը վկայում է, որ տեղամասի պաշարները վերականգնվող են, ինչը կապված է Արաքս գետի մեկ՝ գարնանային վարարման հետ: Գետառողողատային տիպի հանքավայրերի վերականգնվող պաշարների գնահատման մեթոդական ցուցումների համաձայն, տեղամասի վերականգնվող պաշարների համար նպատակահարմար է ընդունել 1 միավոր

վերականգնման գործակից: Արաքս գետի ջրերը քիմիական տեսակետից ազդեցիկ չեն բետոնի, մետաղի և այլ շինանյութերի հանդեպ: Դրա մասին են վկայում գետի վրա կառուցված բազմաթիվ հիդրոտեխնիկական կառույցները և գյուղատնտեսական ոռոգման նպատակով այդ ջրերի օգտագործման դարավոր փորձը:

Հայցվող տարածքից 325մ արևելք անցնում է Արարատյան հարթավայրի դերիվացիոն համակարգի բաղկացուցիչ ջրանցքներից մեկը, իսկ 925մ հյուսիս՝ Արաքս գետն է թափվում Ազատ գետը (նկար 9):



Նկար 9.

- **Հողեր**

Նկարագրվող տարածքում զարգացած են կիսաանապատային գորշ, մնացորդային մարգագետնային ոռոգելի և աղուտ-ալկալի հողերը (նկար 10):

Կիսաանապատային գորշ հողերը զարգանում են խիստ ցամաքային, շոգ կլիմայի և կիսաանապատային բուսածածկույթի պայմաններում, կարբոնատներով և

իւճով հարուստ ավազակավերի և թեթև կավավազների վրա: Բնորոշվում են վերին հորիզոնի շերտավոր-թեփուկային, իսկ միջին հորիզոնում՝ անկայուն կնձկային ստրուկտուրայով: Իլյուվիալ-կարբոնատային հորիզոնի զգալի մասը խիստ ցեմենտացված է: Հողերն աչքի են ընկնում հումուսի փոքր քանակով (1-2%), միջին և ավելի փոքր կլանման ծավալով, թույլ հիմնային ռեակցիայով, քարքարոտությամբ և ուժեղ կարբոնատացվածությամբ:

Հողերը հիմնականում ունեն սակավ հզորություն, միջին կավավազային (62%) մեխանիկական կազմ: Այս տիպի հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³ սահմաններում, տեսակարար զանգվածը՝ 1.34-1.42գ/սմ³, ընդհանուր ծակոտկենությունը՝ 46-48%:

Կիսաանապատային գորշ հողերի քիմիական և ֆիզիկաքիմիական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 8-ում:


Աղյուսակ 8.

| Խորությունը, սմ | Տոկոսներով | | | Կլանված հիմքերի գումարը մ/էկվ 100գ հողում | pH-ը ջրային քաշվածքում |
|-----------------|------------|-----------------|----------------------|---|------------------------|
| | հումուս | CO ₂ | գիպս SO ₄ | | |
| 0-8 | 2.10 | 1.3 | 0.05 | 22.0 | 8.0 |
| 8-21 | 1.81 | 4.7 | 0.08 | 30.5 | 8.3 |
| 21-32 | 1.55 | 10.6 | 0.5 | 23.6 | 8.2 |
| 32-65 | 0.87 | 15.5 | 0.8 | 18.3 | 8.1 |
| 65-140 | 0.22 | 2.2 | 42.1 | - | 7.3 |

Մնացորդային մարգագետնային գորշ ռոտզելի հողերը տարածված են Արարատյան դաշտի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում, որոնք ընկած են ծովի մակերևույթից 800-950մ բարձրությունների վրա և կապված են Արաքս գետի հինավուրց դարավանդների հետ: Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային են:

Հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք ունեն 1-3, իսկ որոշ դեպքերում՝ 5մ խորություն: Դրանք ունեն չգատորոշված պրոֆիլ, կլանման բարձր ծավալ, թույլ հիմնային ռեակցիա, կարբոնատների նվազ պարունակություն: Հողերը թույլ ազրեգացված են, միջին շերտերում նկատվում է ամրացվածություն:

Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Աղուտ-ալկալիներ մարգագետնային սողային-քլորիդային կավավազային
- Ոռոգելի խոնավ-մարգագետնային-գորշ ալկալի սողային-քլորիդային միջին հզորության կավավազային
- Ոռոգելի խոնավ-մարգագետնային-գորշ խորքային աղուտ-ալկալի սողային հզոր կավային
- Ոռոգելի մարգագետնային-գորշ աղուտ-ալկալի խորքային միաձույլ սողային-սուճատ-քլորիդային միջին հզորության կավային

Նկար 10.

Աղուտ-ալկալի հողերը առաջացել են Արարատյան դաշտում ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի (1-2մ) պայմաններում: Հողերն աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավոր մեխանիկական կազմով:

Հայցվող տարածքը ներկայացված է Արաքս գետի վարարման արդյունքում ձևավորվող արտաբերման և ափամերձ ժամանակակից ու վերին չորրորդականի ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով, որոնք ծածկվում են 0.20մ հզորությամբ աղուտ-ալկալի հողերով: Տեղամասի հողերի ջրային քաշվածքով որոշվել է դրանց քիմիական կազմը (մմոլէկվ/կգ). CO_3^{2-} 2.72, HO_3^- 6.12, Cl^- 0.92, SO_4^{2-} 0.22, Ca^{2+} 0.12, Mg^{2+} 0.10, Na^++K^+ 7.04: ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանի


հավելվածի աղյուսակ 1-ով նշված մետաղները (պղինձ, նիկել, ցինկ, քրոմ) տեղամասի հողերում չեն արձանագրվել:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանի բնական բուսածածկը ներկայացված է հիմնականում անապատային աղասեր տեսակներով (նկար 11): Տեղամասի տարածքը 2023 թվականի հունվարին դիտարկվել է երթուղիներով: Ուսումնասիրության արդյունքներով տեղամասում նշվել են անապատասեզ, օշան, սարսագան, անողնուցուկ, սեզ, սեզախոտ, այծակն, հենրարդիա: Արաքս գետին կից հատվածներում դիտարկվել են հարավային եղեգի, կեռոնի, բադախոտի առանձին կղզյակներ: Գետի երկայնքով, պաշտպանիչ 20մ-ոց բնամասում հանդիպում է նաև ուռենի:

Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից Արտաշատի ենթաշրջանում հայտնի են հետևյալ տեսակները.

- գինեծաղիկ գազատերև (*Oenanthe silaifolia* M. Bieb.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, աճում է ծ. մ. 800-1000 մ բարձրության վրա, գետերի և ջրանցքների ափերին;
- գազ Շելկովնիկովի (*Astragalus schelkovnikovii* Grossh.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1200 մ բարձրությունների վրա, չոր տեղերում՝ փուխր և ավազոտ մակերեսով, անապատում, կիսաանապատում;
- գազ Սուկաչովի (*Astragalus sukaczewii* Derv. et Jelenevsky) – խոցելի տեսակ, աճում է միջին լեռնային գոտում, ծ.մ. 1200-2000մ բարձրությունների վրա, կրաքարային և խճաքարքարոտ լանջերին՝ կիսաանապատային բուսականության կազմում, կաղնու և գիհուն նոսրանտառներում;
- կղմուխ Օշեի (*Inula aucheriana* DC. (= *I. seidlitzii* Boiss.) – վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1100 մ բարձրությունների վրա տրավերտիններում, հանքայնացած ճահճային տեղերում, խոնավ աղուտներում, հանքային աղբյուրների մոտ;



Նկար 11.

- միկրոկնեմում մարգանանման (*Microcnemum coralloides* (Loscos et Pardo) Font-Quer) – վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 800-850 մ բարձրությունների վրա, աղակալված ճահիճներում և աղուտներում;
- հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica* Fomin) – վտանգված տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1500 մ բարձրությունների վրա, աղիավուն ճահիճներում, խոնավ աղակալած մարգագետիններում, ոռոգիչ ջրանցքների ափերին:

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում մանրազննին դիտարկման արդյունքում վերը նշված՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները չեն դիտարկվել:

Տարածքներում հանդիպում են ամենուր զարգացած ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ,

կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Գետի ջրերում հանդիպում են թեփուկ, ճանառ, լոք, կամրմրախայթ:

Արաքս գետն ունի կարևոր օրնիթոլոգիական նշանակություն: Թռչունների ամենամեծ կուտակումները տեղի են ունենում «Խոր վիրապ» պետական արգելավայրի և Արմաշ բնակավայրի սահմանամերձ տարածքներում: Այստեղ յուրաքանչյուր տարի բնադրում են փոքր ձկնկուլը, քաջահավը, տառեղը, տարգալակտուցը, մկնաճուռակը: Հանդիպում են միգրացիոն ջրլող թռչուններ՝ կարապներ, բադեր, սագեր, իսկ մշտական բնադրող տեսակներից են արագիլները, ճահճային տեսակները, ագռավազգիները:

Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից հանքավայրի տարածաշրջանում հայտնի են.

- սիմպեկտա ճպուռ (*Symplocma paedisca*) – հազվագյուտ տեսակ, հայտնի է լճացված ջրերով ջրամբարներում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում;

- անդրկովկասյան տակիրային կլորագլուխ (*Phrynocephalus orvathi*) – խիստ սակավաթիվ, անհետացող, կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Բնակվում է նոսր քսերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում՝ աքիլեյան, աղուտային, տեղ-տեղ օշինդրային բուսականության առկայությամբ, 800-1050 մ ծ.մ. բարձրության վրա: Պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» և «Որդան կարմիր» արգելավայրերում;

- սև անգղ (*Aegipus monachus*) – վտանգված տեսակ, բնադրում է լեռնաշղթաների համեմատաբար փոքր թեքություն ունեցող լանջերի լեռնատափաստանների տեղամասերով հերթափոխվող գիհու արիդային նոսրանտառների սահմաններում, սովորաբար, 1200-2000 մ ծ.մ. բարձրություններում: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում, որտեղ կանոնավոր բնադրում է;

- տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*) – վտանգված տեսակ, բնադրում է լեռնատափաստաններում, լայնարձակ հարթավայրային հովիտներում,

սովորաբար, 800-2000 մ ծ.մ. բարձրություններում: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում;

- կարմրատոտ բազե (*Falco vespertinus*) – անհետացող տեսակ: Բնակվում են լայնատարած կիսաանապատային և տափաստանային տեղամասերում անտառակների կամ ծառերի առանձին խմբերի առկայությամբ, հաճախ գետերի հովիտներում կամ այլ ջրամբարների հարևանությամբ, երբեմն՝ նոսրանտառներում և անտառեզրերում, լեռներում՝ մինչև 1500 մ ծ.մ.բ. բարձրություններում:


2023 թվականի հունվարին կատարվել է հայցվող տարածքի դիտարկում՝ վերը նշված, ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով: Դիտարկումների արդյունքներով արձանագրվել է, որ հայցվող տեղամասում վերը նշված՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների բնադրավայրեր չկան:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Բերքանուշի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Հայցվող տարածքից շուրջ 7.95կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ» պետական արգելավայրը (նկար 12), որը ստեղծվել է 2007 թվականին խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման նպատակով:

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար խոնավ տարածքի վրա:

Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները Մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:



Նկար 12.

Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի, բուսական ու կենդանական աշխարհի՝ հատկապես ջրլող թռչունների ու դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մետր լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանական գոտի:

«Խոր վիրապ» պետական արգելավայրի ջրաճահճային տարածքներում արձանագրվել են Կենդանիների կարմիր գրքում գրանցված վարդագույն և գանգրափեթուր հավալուսնը, փոքր ձկնկուլը, թշան կարապը, մոխրագույն սագը, կարմիր բաղը, սպիտակաաչք սուզաբաղը, ծովային քարաղբը, սպիտակապոչ եղտյուրիկը, որորակտուց ջրածիծաղը, սոխականման ճռիկահավը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը :

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 9.

| Հ/Հ | Անվանումը | Տեղադիրքը |
|-----|--|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | «Անձավիկ» քարանձավ | Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա |
| 2. | «Դաշտաքար» քարանձավ | Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա |
| 3. | «Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ» | Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա |
| 4. | «Անանուն» շերտավոր նստվածքներ | Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա |
| 5. | «Անանուն» անտիկլինալ ծալք | Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 6. | «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա | Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 7. | «Անանուն» ծալքագոյացման մերկացում | Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին |
| 8. | «Հորթունի» բրածո ֆլորա | Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ |
| 9. | «Զերմանիսի» բրածո ֆլորա | Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում |
| 10. | «Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա | Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ |
| 11. | «Աղակալած ճահճուտ» | քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության |

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող տարածքներին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանն է, որը գտնվում է հայցվող տարածքից ավելի քան 23կմ հեռավորության վրա:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը տարածական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզում:

2022թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզի ընդհանուր տարածքը՝ 2090.03 ք.կմ է, ինչը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 7 %-ը: Համայնքների թիվը՝ 95, բնակավայրերի թիվը՝ 99:

Մարզն ունի շուրջ 259.3 հազար բնակչություն, որից 72.3 հազ. քաղաքաբնակներ են (28%), 187 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

Մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ Արարատ 20.5 հազար մարդ, Արտաշատ 19.1 հազար մարդ, Մասիս 20.9 հազար մարդ, Վեդի 11.8 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը

կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝

արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորզման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

| | Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drums | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drums | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of industrial production, % | |
|---|---|--|--|--|
| ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ARARAT MARZ | | | | |
| Ամբողջ արդյունաբերությունը | 301 033.5 | 327 001.2 | 98.7 | Total industry |
| <i>այդ թվում՝</i> | | | | <i>including:</i> |
| Հանքագործական արդյունաբերություն և բազահանքերի շահագործում | 1 694.0 | 2 420.2 | 138.0 | Mining and quarrying |
| <i>այդ թվում՝</i> | | | | <i>including:</i> |
| հանքագործական արդյունաբերության և բազահանքերի շահագործման այլ ճյուղեր | 1 694.0 | 2 420.2 | 138.0 | other mining and quarrying |
| Մշակող արդյունաբերություն | 287 847.8 | 313 089.4 | 98.5 | Manufacturing |
| <i>որից՝</i> | | | | <i>of which :</i> |
| սննդամթերքի արտադրություն | 48 796.9 | 48 236.1 | 118.3 | manufacture of food products |
| խմիչքների արտադրություն | 27 585.6 | 28 214.6 | 82.1 | manufacture of beverages |
| ծխախտային արտադրատեսակների արտադրություն | 69 105.1 | 68 774.8 | 86.6 | manufacture of tobacco products |
| հագուստի արտադրություն | 738.4 | 832.5 | 104.6 | manufacture of wearing apparel |
| թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն | 18 376.7 | 18 579.5 | 87.0 | manufacture of paper and paper products |
| քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն | 346.0 | 345.7 | 119.3 | manufacture of chemicals and chemical products |
| ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն | 984.3 | 1 222.4 | 105.4 | manufacture of rubber and plastic products |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 23 032.5 | 23 285.4 | 127.2 | manufacture of other non-metallic mineral products |
| հիմնային մետաղների արտադրություն | 96 833.8 | 121 717.2 | 102.5 | manufacture of basic metals |
| Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | 10 012.8 | 10 012.8 | 101.0 | Electricity, gas, steam, and air conditioning supply |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում | 1 478.9 | 1 478.9 | 93.3 | Water supply, sewerage, waste management and remediation activities |

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31- են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ զինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 125.0լն.դրամ, որից բուսաբուծությունը՝ 94.0մլն. դրամ, անասնաբուծությունը՝ 31.0մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունը կազմել են 2568հա, միջին բերքատվությունը՝ 36.4g/հա, խամախառն բերքը՝ 9.6հազ.տ:

Կարտոֆիլի ցանքսատարածությունը կազմել են 508հա, միջին բերքատվությունը՝ 285.1g/հա, խամախառն բերքը՝ 14.5հազ.տ:

Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 5110հա, 400.2g/հա և 227.1հազ.տ, բոստանային

մշակաբույսերի համար՝ 981հա, 382.7գ/հա և 37.5հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 8630հա, 104.3գ/հա և 79.7հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 4849հա, միջին բերքատվությունը՝ 272.3գ/հա, խամախառն բերքը՝ 123.7հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 45.4հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 14.4հազ.գլուխ, խոզեր 21.7հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 100.5հազ.գլուխ, ձիեր՝ 0.9հազ.գլուխ:

Իրականացվել է 24160.2մլն.դրամի շինարարություն և 23114.1մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Հայցվող տարածքը ներառված է Արտաշատ խոշորացված համայնքի վարչական տարածքում: Խոշորացված համայնքը ձևավորվել է 38 բնակավայրերի միավորման արդյունքում՝ ք. Արտաշատ, Աբովյան, Ազատական, Այգեգարդ, Այգեպատ, Այգեստան, Արաքսավան, Արևշատ, Բաղրամյան, Բարձրաշեն, Բերդիկ, Բերքանուշ, Բյուրավան, Բուրաստան, Գետագատ, Դալար, Դեղձուտ, Դիմիտրով, Դիտակ, Դվին, Լանջագատ, Կանաչուտ, Հնաբերդ, Հովտաշեն, Մասիս, Մխչյան, Մրգանուշ, Մրգավան, Մրգավետ, Նարեկ, Նշավան, Նորաշեն, Շահումյան, Ոստան, Ջրաշեն, Վարդաշեն, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն:

Խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառի մի շարք բնութագրիչներ ներկայացված են ստորև աղյուսակներում:

Աղյուսակ 11.

Հանրային ծառայության օբյեկտներ

| Վիճակի նկարագրություն | | |
|---|-----------------|------|
| Ցուցանշներ | Արտաշատ համայնք | |
| | Չափ.միավ. | 2022 |
| Առևտրի օբյեկտներ | հատ | 312 |
| Հանրային սննդի օբյեկտներ | հատ | 41 |
| Հյուրանոցային համալիրներ | հատ | 3 |
| Գյուղական արտադրանքի շուկաներ | հատ | 2 |
| Սգո սրահներ | հատ | 3 |
| Տեխնիկական հեղուկներ վաճառող օբյեկտներ | հատ | 27 |
| Հեղուկ վառելիքի մանրածախ առևտուր | հատ | 28 |
| Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի օբյեկտներ | հատ | 3 |
| Տաքսի ծառայություններ | հատ | 25 |

Սոցիալական աջակցություն և առողջապահություն

| Վիճակի նկարագրություն | | |
|--|-----------------|--------|
| Ցուցանիշներ | Արտաշատ համայնք | |
| | Չափի միավոր | 2022 |
| Բնակչության թիվը | մարդ | 109545 |
| Սոցիալապես անապահովներ | % | 27 |
| Հաշմանդամներ՝ | | |
| 1-ին խումբ | մարդ | 46 |
| 2-րդ խումբ | մարդ | 198 |
| 3-րդ խումբ | մարդ | 99 |
| Մանկուց հաշմանդամ երեխաներ | մարդ | 230 |
| Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | մարդ | 235 |
| Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | մարդ | 9 |
| Կենսաթոշակառուներ | մարդ | 718 |
| 3 երեխա ունեցող տնային տնտեսություններ | | 725 |
| 4 երեխա ունեցող տնային տնտեսություններ | | 158 |
| 5 երեխա ունեցող տնային տնտեսություններ | | 49 |

Գյուղատնտեսություն և բնապահպանություն

| ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | | |
|-----------------------------|-------------|----------|
| Ցուցանիշներ | Չափի միավոր | 2022 |
| Վարչական շրջանի տարածք | Հա | 2254,84 |
| Բնակավայրի բնակելի | Հա | 268,421 |
| Գյուղատնտեսական հողեր Որից՝ | Հա | 1460,610 |
| վարելահող | Հա | 772,97 |
| Բազմամյա տնկարկներ | Հա | 205,664 |
| Պտղատու այգի | Հա | 100,14 |
| Խաղողի այգի | Հա | 105,525 |
| խոտհարկ | Հա | 14,99 |
| արոտ | Հա | 242,04 |
| այլ հողատեսքեր | Հա | 224,946 |

Գյուղատնտեսության ոլորտում համայնքի կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արտադրողականության բարձրացմանը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգությանը,

ջրային ռեսուրսների պահպանման մակարդակի բարձրացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը:

- Համայնքում մեծ թափ է առել ինտենսիվ այգիների, ռոռզման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրումը, որի նպատակն է խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնումը և այդ եղանակով պտղաբուծության և խաղողագործության զարգացումն ու արդյունավետության բարձրացմանը:

- «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցությունն է ծրագրի շրջանակներում Արտաշատ համայնքում հիմնված 54 հա խաղողի և 30 հա պտղատու ինտենսիվ այգիներ, նախատեսվում է հիմնել ևս մոտ 50 հա խաղողի և 30 հա պտղատու այգիներ:

- «Ռոռզման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորմանն է ծրագրի շրջանակներում, նաև սեփական միջոցներով, կավելանան համայնքում առկա 52,5 հա բանջարեղենի և 133,4 հա բազմամյա տնկարկների կաթիլային ռոռզմամբ տարածքները՝ ևս 100 հա-ով, կավելանա նաև կաթիլային շիթով առկա 50,2 հա բազմամյա տնկարկների տարածքները մոտ 50 հա-ով:

- Նախատեսվում է համայնքում առկա 1750 հատ 16214 տոննա տարողության սառնարանային տնտեսությունների հզորության ավելացում:

- «Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցությանն է ծրագրի նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել համայնքում ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրանքի արտադրության ծավալները, բարձրացնել արտադրված արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

- Գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրերի իրականացման շրջանակներում Համայնքում կարկտապաշտպան ցանցերով պատված պտղատու և խաղողի այգիների տարածքը յուրաքանչյուր տարի

ավելացնել 5-10 հա-ով: Կարկտապաշտպան ցանցեր կիրառած տնտեսվարողների մոտ գրեթե կբացառվի կարկտահարության ռիսկը:

- Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի իրականացում, ագրոքիմիական քարտեզների մշակում, որոնք հիմք կծառայեն գյուղատնտեսական մշակաբույսերի գիտականորեն հիմնավորված նորմաներով պարարտացման համար:

- Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության իրականացում:

- Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սպանդանոցային մորթի գործընթացի լիարժեք կազմակերպում:

- «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում», «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» և «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագրերի շրջանակում իրականացվելու է գյուղատնտեսական կենդանիների պատվաստում, բույսերի պաշտպանության միջոցառումներ և խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում:

- Նախատեսվում է ստեղծել նորագույն տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսական տեխնիկայի կայան, ինչը թույլ կտա փոքր եւ միջին ֆերմերներին իրենց հողը մշակել առավել արդյունավետ և բարձրացնել բերքատվությունը:

- Խորհրդատավական ծառայություններ են մատուցվելու ագրարային ոլորտի տարբեր ուղղություններով՝ ներառյալ դաշտավարության, այգեգործության, անասնապահության, գյուղատնտեսական տեխնիկայի կիրառում եւ այլն:

Արտաշատ խոշորացված համայնքում մշակութային ժառանգության ոլորտում հիմնական ուղղություններն են լինելու հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրության, օգտագործման և հանրայնացման շարունակականության ապահովումը, մշակութային զբոսաշրջությանը նպաստող ծրագրերի իրականացումը: Նախատեսվում է համայնքի մշակութային շենք-շինությունների վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, ինչը կնպաստի խոշորացված համայնքի բնակիչների ընդգրկվածությանը մշակութային կյանքին: Զարգացման նպատակներից ելնելով

նախատեսվում է բնակավայրերի գրադարանների վերանորոգման, բարեկարգման և նոր տեխնոլոգիական միջոցներով վերազինելու աշխատանքներ, թանգարանների և գրադարանների՝ որպես սոցիալ-կրթական ինստիտուտների կայացում, մշակութային ժառանգության թվայնացման աշխատանքներ:

Արտաշատ խոշորացված համայնքում սպորտի զարգացման նպատակով նախատեսվում է մարզադաշտերի, մարզահրապարակների, մարզասրահների կառուցապատման և բարեկարգման աշխատանքներ: Խրախուսվելու և օժանդակություն է ցուցաբերվելու սպորտային մրցաշարերի մասնակից մարզիկներին և նրանց մարզիչներին: Պարբերաբար նախատեսվում է կազմակերպել ներհամայնքային մարզական միջոցառումներ, որտեղ կխրախուսվի առողջ ապրելակերպի գաղափարը:

Երիտասարդության ոլորտում Արտաշատ խոշորացված համայնքում առաջնահերթ քայլեր են ձեռնարկվելու իրավական միջավայր ստեղծելու և երիտասարդության ներուժը համայնքային կյանքի զարգացման համար արդյունավետ դարձնելու քայլերի ուղղությամբ: Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը, մասնագիտական նախագծերի կողմնորոշման ծրագրերի շրջանակին: Նախատեսվում է համայնքում երիտասարդական կենտրոնների հիմնադրում և զարգացում: Համայնքն ապահովելու է երիտասարդության ոլորտում փորձի փոխանակում Հայաստանի և տարածաշրջանային այլ գործընկերների միջև՝ ընդգրկելով նաև սփյուռքի երիտասարդությանը:

Ազդակիր Դալար գյուղը տեղադրված է Արարատյան դաշտում՝ Արաքս գետի հովտում, ծովի մակարդակից 835մ բարձրության վրա: Բնական լանդշաֆտը կիսաանապատային է, որը ոռոգման ընթացքում վեր է ածվում կուլտուրական մշակաբույսերով ցանքատարածքների ոռոգելի լանդշաֆտի: Հաճախ լինում են ուժգին քամիներ, առատ անձրևներ և կարկուտ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:

Բնակչության նախնիները եկել են Խոյից 1828 – 31 թվականներին 200 տնտեսությունով: Բնականչության համալրում է եղել 1922, 1946, 1958 – 1960թվականներին: Բնակչության թիվը կազմում է 3060 մարդ: Սեռային կազմում

տղամարդիկ կազմում են 47%, կանայք 53%: Բնակչության մեջ մինչ աշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 22%, աշխատունակները 63%, հետ աշխատունակները 15%: Գյուղն ունի 749 տնտեսություն, միջնակարգ դպրոց, մանկապարտեզ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 350 հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 190 հա, ունի պտղատու (27 հա) և խաղողի (29 հա) այգիներ: Զբաղվում են այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև հացահատիկ և ծխախոտ:

Աղյուսակ 14.

| ԴԱԼԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | | | |
|---|--|--------------------|-------------|
| Ցուցանիշներ | | Չափի միավոր | 2022 |
| Բնակչություն | | Մարդ | 2874 |
| Վարչական շրջանի տարածք | | Հա | 518.6 |
| Բնակավայրի բնակելի | | Հա | 124.1 |
| Գյուղատնտեսական հողեր որից՝ | | Հա | 346.5 |
| վարելահող | | Հա | 168.35 |
| բազմամյա տնկարկներ | | Հա | 48.85 |
| պտղատու այգի | | Հա | 19.62 |
| խաղողի այգի | | Հա | 29.23 |
| խոտհարկ | | Հա | - |
| արոտ | | Հա | - |
| այլ հողտեսքեր | | Հա | 129.3 |
| փողոցների երկարություն որից՝ | | Կմ | 9 |
| ասֆալտապատ | | Կմ | 2 |
| Կոմունալ տնտեսություն | | | |
| Բազմաբնակարան շենքեր | | հատ | - |
| Վերելակներ | | հատ | - |
| Վթարային շենքեր | | հատ | - |
| Անհատական բնակելի տներ | | միավոր | - |
| Փողոցային լուսավորություն որից՝ | | կմ | 7 |
| Լեդ (LED) | | կմ | 7 |
| Առևտուր և սպասրկում | | | |
| Առևտրի սպասարկման փոքր և միջին օբյեկտներ | | հատ | 15 |
| Բարեգործական ճաշարան | | հատ | - |
| Հյուրանոցներ | | հատ | - |
| Շուկաներ | | հատ | - |

| | | | |
|--|---------------------------------------|-------|-----|
| | Բարեկարգում | | |
| | Հանգստի գոտիներ | հատ | - |
| | Բակային խաղահրապարակներ | հատ | |
| | Թեքահարթակներ | հատ | 2 |
| | Կրթություն և մշակույթ | | |
| | Նախադպրոցական հաստատություններ | հատ | 1 |
| | Երեղաների թիվը | երեխա | 50 |
| | Աշխատողների թիվը | մարդ | 22 |
| | Հանրակրթական դպրոց | հատ | 1 |
| | Երեխաների թիվը | երեխա | 286 |
| | Աշխատողների թիվը | մարդ | 45 |
| | Երաժշտական դպրոց | հատ | - |
| | Մարզադպրոց | հատ | - |
| | Արվեստի դպրոց | հատ | - |
| | Գրադարան | հատ | 1 |
| | Գեղարվեստական դաստիարակության կենտրոն | հատ | - |
| | Հուշարձաններ | հատ | 1 |
| | Բնապահպանություն | | |
| | Սպասարկվող կանաչապատ գոտի | քմ | |
| | Առողջապահություն | | |
| | Առողջապահական հիմնարկներ | հատ | 1 |
| | Մասնավոր առողջապահական հիմնարկներ | հատ | - |
| | Զբոսաշրջություն | | |
| | Տեսարժան վայրեր | հատ | - |
| | Պատմամշակութային վայրեր | հատ | - |
| | Եկեղեցիներ | հատ | 1 |

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող 4.8հա տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական «այլ» գործառնական նշանակության հողերով:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 22-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Դալար բնակավայրում հաշվառված են 1890թ.-ի Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին և 1960թ.-ի քաղաքացիական կռիվներում զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշաղբյուրը, որոնք գտնվում են գյուղի մեջ, 4-րդ տեղամասից մոտ 3.8կմ հեռավորության վրա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասում ծրագրավորվող աշխատանքերի ընթացքում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա հնարավոր է հետևյալ բացասական ազդեցությունների դրսևորումը:

Մթնոլորտային օդ.

Տեղամասի տարածքում վնասակար գազերի և փոշու արտանետումները կապված են լինելու հիմնականում ավտոտրանսպորտի տեղաշարժի հետ: Հետախուզահորերի անցման ժամանակ փոշու արտանետումներ չեն լինելու, քանի որ ավազակոպճային կուտակը՝ ջրերի կապիլյար ներծծման հաշվին, գտնվում է ջրահագեցած վիճակում:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի մոտակա բնակավայրերում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) համապատասխանաբար չպիտի գերազանցեն 5մգ/մ^3 , 0.2մգ/մ^3 , 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3 : Նախնական գնահատականներով, տեղամասի սահմաններում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով առաջանալու է 0.006գ/վրկ փոշի, ինչը չի գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ջրային ավազան.

Բուն հայցվող տարածքում բնական ջրային հոսքեր չկան: Հայցվող տարածքի արևմտյան սահմանի և Արաքս գետի միջև պաշտպանված է 20մ հեռավորություն (պաշտպանիչ բնամաս):

Քանի որ տեղամասը ծագումնաբանորեն կապված է Արաքս գետի ստորին դարավանդի լճային-այլուվիալ նստվածքների հետ, ապա ավազակոպճային կուտակը գտվում է խոնավ վիճակում է, ինչը պայմանավորված է ջրերի կապիլյար ներծծմամբ :

Հարակից տարածքները յուրաքանչյուր տարի՝ Արաքսի վարարման շրջանում, վրածածկվում են գետի ջրերով և ձևավորվում են ավազակոպճային խառնուրդի դինամիկ պաշարները:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարվելու է գետի դինամիկ ռեժիմի դիտարկումներ և վարարման շրջանում՝ գետի ջրերի աղտոտումը կանխելու նպատակով, աշխատանքները դադարեցվելու են :

4-րդ տեղամասից մոտ 325մ հեռավորության վրա գտնվում է Արարատյան դաշտավայրի կոլեկտորա-դրենաժային համակարգի բաղկացուցիչ կառույցը:

Դրա վրա ազդեցություն աշխատանքների ընթացքում չի դրսևորվելու, հաշվի առնելով առկա հեռավորությունը, ինչպես նաև քանի որ պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում, հորերը անցվելու են մեխանիկական շերտիման եղանակով և փաստագրման, նմուշարկման աշխատանքներից հետո կատարվելու է դրանց հետլցում: Տեխնիկական միջոցները տարածք են մտնելու գոյություն ունեցող ճանապարհներով :

Հողային ծածկույթ.

Հայցվող տարածք հիմնական մասը ծածկված է Արաքս գետի վարարման արդյունքում ձևավորվող արտաբերման և ափամերձ ժամանակակից ու վերին չորրորդականի այլուվիալ-դելյուվիալ նստվածքներով, որոնք ծածկվում են 0.12-0.20մ հզորությամբ աղուտ-ալկալի հողեր:

Հետախուզահորերի անցման ժամանակ վերին հատվածը՝ մինչև 20սմ հզորությամբ, կուտակվելու է հորից հանված ավազակոպճային խառնուրդից առանձին :

Ենթակառուցվածքներ՝ արտադրական հրապարակ, լցակույտ և այլ, չի նախատեսվում :

Մեքենաների տեղաշարժը գոյություն ունեցող ճանապարհներով կանխելու է նաև նավթամթերքներով հնարավոր աղտոտումը :

Բուսական և կենդանական աշխարհ.

Ավազակոպճային խառնուրդի հետախուզման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության տեխնոլոգիական գործընթացը բացառում է ազդեցիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ: Բուսականության վրա բացասական ազդեցություն գրեթե չի դրսևորվելու, քանի որ հետախուզահորերի անցման աշխատանքները խիստ կարճաժամկետ են, անմիջապես փաստագրման և նմուշարկման աշխատանքներից հետո կատարվելու է ռեկուլտիվացիա:

Տեղամասի սահմաններում խոշոր կաթնասունների բներ, որջեր չեն արձանագրվել: Առկա են դաշտային մկների բազմաթիվ լքված բներ: Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ, կարճաժամկետ գործոնը կապված է լինելու աղմուկի հետ:

Տեղամասում չեն արձանագրվել նաև ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է նվազագույն:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի հարակից տարածքում երկրաբանական ուսումնասիրության արդյունքում ընդերքօգտագործման թափոններ չեն ձևավորվում, քանի որ.

- 20սմ հզորությամբ աղուտ-ալկալի հողերի շերտը թափոն չի համարվում, այն բնական ռեսուրս է և օգտագործվելու է հետագա ռեկուլտիվացման համար,
- հետախուզական փորվածքներից հանված ավազակոպճային նյութը, նմուշարկումից հետո, օգտագործվելու է ռեկուլտիվացիայի համար՝ հետ է լցվելու հորի տարածք,
- մեքենաների տեխնիկական սպասարկումը հիմնականում կատարվելու է Դալար բնակավայրի մասնագիտացված ընկերություններում, որտեղ

ապահովված են անհրաժեշտ պայմանները քայուղերի, յուղերի, տարատեսակ նավթամթերքների անվտանգ պահման և օգտագործման համար :

Աշխատանքների ընթացքում հնարավոր է հետևյալ տեսակի թափոնների առաջացումը.

- բանեցված շարժիչների յուղերի թափոններ, ծածկագիր՝ 54100201 02 03 3, կազմը՝ յուղ -94.6% , ջուր- 3.2%, մեխանիկական խառնուրդների -2.1% , ծավալը՝ 35լ ;
- բանեցված դիզելային յուղեր, ծածկագիր՝ 54100203 02 03 3, կազմը՝ յուղ -95.0% , մեխանիկական խառնուրդներ -1.8%, ջուր- 3.2% ;
- չտեսակավորված կենցաղային աղբ, ծածկագիր՝ 91200400 01 00 4, կազմը՝ ապակի - 9-15%, թուղթ-25-35%, կտոր -5-10%, սննդի մնացորդ -20-35%, պոլիմերներ-5% :

Հետախուզահորերից հանվում է 450մ³ լեռնային զանգված, որից 430.65մ³ (առանց լաբորատորիա ուղարկված ԱԿԽ նյութի) հետ է լցվելու հորերի տարածք և ռեկուլտիվացվելու է: Թափոնների առաջացում հետախուզահորերի անցման ժամանակ չի նախատեսվում :

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ մոտակա պահպանվող տարածքը՝ «Խոր Վիրապ» պետական արգելավայրը գտնվում է տեղամասի կենտրոնից մոտ 7.95կմ հեռավորության վրա: Տեղամասի տարածքում չկան նաև բնության հուշարձաններ, Ամենամոտ «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանը գտնվում է հայցվող տարածքից մոտ 23կմ հեռավորության վրա:

Պատմության և մշակույթի հուշարձաններ.

Բերքանուշի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի և Դալար բնակավայրի պատմության, մշակույթի հուշարձանների միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 3.8կմ:

Բուն տեղամասի տարածքում պատմամշակութային հուշարձաններ չկան, տեղամասը չի համընկնում նաև հուշարձանների պահպանության գոտիներ հետ, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա:

Աղմուկ և թրթռումներ.

Համաձայն ՄՆ-245-71 սանիտարական նորմերի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման տարածքների համար սանիտարական պահպանման գոտի սահմանված չէ: Առանց պայթեցման աշխատանքների կիրառման քարի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանվում է 50մ սանիտարական գոտի:

Դալար բնակավայրի մոտակա բնակելի տարածքները գտնվում են 4-րդ տեղամասից 3150մ հեռավորության վրա, ինչը գերազանցում է սանիտարական պահպանման գոտու չափերը 63 անգամ:

Հետևաբար, ավազակոպճային խառնուրդի հետախուզման աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:

Կենցաղային պայմաններ.

Բերքանուշի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ, որը նախատեսված է աշխատակիցների սնունդ ընդունելու և հանգստի համար: Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է Դալար բնակավայրի առևտրի կետերից 5լ-ոց պլաստմասե տարաներով և տեղափոխվելու է տեղամասի տարածք աշխատանքները սպասարկող մարդատար մեքենայով:

Տեխնիկական ջուրը նախատեսվում է վերցնել Արաքս գետից, ինչի նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը կդիմի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն հայցելու նպատակով: Ներկայումս «Սավ Մայնինգ» ՍՊ ընկերություն ջրօգտագործող չի հանդիսանում:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով ճանապարհների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին : Ըստ գործող նորմատիվների՝ $1մ^2$ տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկում են հատուկ ծառայության ուժերով, իսկ արտաքնոցի հորը լցվում է քարերով :
- Աշխատանքների դադարեցում Արաքս գետի վարարման շրջանում: Այդ ժամանակահատվածում կատարվելու են միայն գետի դինամիկայի դիտարկումներ :
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Հետախուզահորերի անցման ժամանակ մինչև 20սմ հզորությամբ վերին շերտի քերում բահերով և տարանջատված կուտակում :

- Հետախուզական հորերի հետլցման աշխատանքներ (նախ՝ ավազակոպճային զանգված, այնուհետև՝ մինչև 20ամ հզորությամբ աղակալված հողանման զանգվածի վերին շերտը), ինչը թույլ կտա վերականգնել տեղամասի լանդշաֆտային ամբողջականությունը: Հետլցման աշխատանքներից հետո նախատեսվում է փխրեցնել 90մ² (15x6.0մ²) տարածքը և ցանել շրջանին բնորոշ աղասեր բուսատեսակների սերմեր: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, առանց տեխնիկական միջոցների կիրառման: Աշխատանքների կատարման նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կհատկացվի 43.2հազ.դրամ գումար: Ռեկուլտիվացիոն աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15.

| 6. | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափման միավորը | Արժեքը |
|----|----------------------------------|----------------|--------|
| 1 | Աշխատավարձ | հազ.դրամ | 20.0 |
| 2 | Նյութեր | հազ.դրամ | 10.0 |
| 4 | Անուղղակի ծախսեր 5.3% | հազ.դրամ | 1.6 |
| 5 | Շահույթ 10% | հազ.դրամ | 3.16 |
| 6 | Չնախատեսված ծախսեր | | 8.44 |
| | Ընդամենը | հազ.դրամ | 43.2 |

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով: Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս:
- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար: Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից:
- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:

- «ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման

սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում: Ընթացակարգն ուղղված կլինի հողային աշխատանքների ընթացքում բացահայտվելիք բոլոր գտածոներին՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

ա. Համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

բ. Հուշարձանների գննության իրականացում, նախքան շինարարական աշխատանքների սկիզբը, երբ հողը մաքրված է ,

գ. Հնագետների տեղաբաշխումը շինարարության վայրերը վերահսկելու համար, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը հողային աշխատանքների իրականացման ընթացքում,

դ. Արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում և գնահատում հնագիտական մոնիտորինգի միջոցով;

ե. Անհրաժեշտության դեպքում պետական մարմինների ծանուցում,

զ. Պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շինարարական աշխատանքների ուշացումները,

է. Մոնիտորինգային գործունեության և պատահական գտածոների արձագանքման վերստուգիչ գրանցումների վարում:

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը հարուստ է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:

Սոտակա հայտնի սողանքային մարմինները քարտեզագրվել են տեղամասից ավելի քան 11.12կմ հեռավորության վրա՝ Այգեգարդ բնակավայրից մոտ 2կմ հյուսիս-արևելք, Քաղցրաշեն բնակավայրից մոտ 0.5կմ հարավ-արևելք: Սողանքային մարմնի կենտրոնի կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ 39° 58' 17" և արևելյան երկայնությունը՝ 44° 38' 14": Մարմինը գտնվում է 982մ բացարձակ բարձրության վրա, զբաղեցնում է մոտ 184հա տարածք (երկարությունը՝ 1300մ, լայնությունը՝ 1800մ):

Հետևաբար, սողանքային երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակ տեղամասում լինել չի կարող:

Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող

կենցաղային նշանակության վագոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ :

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ : Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավագով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ) : Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վագոն-տնակում:

4) Արաքս գետի վարարում՝ ապրիլի վերջից-հունիսի վերջ: Սակայն այդ շրջանում երկրակման տարածքում աշխատանքներ չեն իրականացվելու: Դադարեցվելու է տեխնիկայի և մարդկանց մուտքն ու տեղաշարժը տեղամասի սահմաններում:

Հանքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,

- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

«ՄԱՎ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից հայցվող տեղամասի տարածքում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության և փրկարար ծառայության հետ:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ (Մթն.նմ.-1) ;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական տեղամասի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ (Հ.նմ.-1);
4. Արաքս գետի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ պղտորության ուսումնասիրության նպատակով (Ջր.նմ.-1, Ջր.նմ-2) :
4. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) (Կ.Մ.Տ):

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16.

| Մշտադիտարկումների օբյեկտը | Ցուցանիշը | Մշտադիտարկումների տեսակը | Նվազագույն հաճախականությունը |
|---|--|--|--|
| 1 | 2 | 3 | 4 |
| Մթնոլորտային օդ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր | Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով | Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ |


| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| Հողային ծածկույթ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր | Հողերում նավթամթերքների պարունակությունը | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն | Տեղամասի տարածք, ամսական մեկ անգամ |
| Արաքս գետի ջրեր | Պղտորություն | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն | Տեղամասին հարակից ձորակ, շաբաթական մեկ անգամ |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. տեղամասի հարակից շրջան | Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն | Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում | Տեղամասի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ |

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 430.0հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 13-ում:

Շրջակա միջավայրի մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մթ.նմ.-1 Մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- Հող.նմ.-1 Տեղամասի տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- Ջ.նմ.-1 Արաքս գետի ջրերի աղտոտվածության մշտադիտարկման կետ /մինչև տեղամասի տարածքը Ջ.նմ.-1, տեղամասի տարածքից հետո Ջ.նմ.-2/
- ▭ Կենսաբազմազանության մշտադիտարկման տարածք


Նկար 13.

Գրականություն

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Флора и растительность рек и озер Армении и их народнохозяйственное значение”. А.М. Барсегян
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
13. Արտաշատ համայնքի պաշտոնական կայք

ԻՐԱՎԻ ՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մասշտաբ 1:25000



Հայցվող տարածքի կոորդինատները

1. Y =8457349.023 X =4423700.923
2. Y =8457370.913 X =4423719.845
3. Y =8457368.265 X =4423725.004
4. Y =8457312.179 X =4423782.257
5. Y =8457252.573 X =4423838.935
6. Y =8457176.723 X =4423926.534
7. Y =8457138.503 X =4423962.635
8. Y =8457011.613 X =4424072.667
9. Y =8456959.342 X =4424118.122
10. Y =8456917.989 X =4424161.038
11. Y =8456875.428 X =4424209.103
12. Y =8456844.004 X =4424240.790
13. Y =8456801.335 X =4424312.519
14. Y =8456741.082 X =4424421.119
15. Y =8456738.693 X =4424419.304
16. Y =8456735.922 X =4424419.309
17. Y =8456731.485 X =4424421.215
18. Y =8456682.631 X =4424387.945
19. Y =8456700.266 X =4424329.389
20. Y =8456709.428 X =4424309.662
21. Y =8456721.836 X =4424279.603
22. Y =8456727.713 X =4424263.070
23. Y =8456747.649 X =4424338.313
24. Y =8456789.222 X =4424192.523
25. Y =8456824.785 X =4424156.810
26. Y =8456843.977 X =4424130.346
27. Y =8456930.993 X =4424064.148
28. Y =8456951.429 X =4424059.084
29. Y =8456990.076 X =4424041.313
30. Y =8457061.406 X =4423982.608
31. Y =8457082.489 X =4423961.737
32. Y =8457111.916 X =4423928.317
33. Y =8457130.795 X =4423911.050
34. Y =8457154.578 X =4423901.299
35. Y =8457178.006 X =4423888.564
36. Y =8457211.445 X =4423851.486
37. Y =8457256.120 X =4423810.201
38. Y =8457290.755 X =4423774.636
39. Y =8457314.460 X =4423742.101